

ՇՆՈՐՀԱԼԻՆ ԱԼԻՇԱՆԻ ԳՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ

Վ. Գ. ԳԵՎՐԿՅԱՆ

Մեր հին շրջանի գրական քննադատության մասին Հրանտ Թափափափյանը գրել է, թե այն շատ նման է «ուսկի հատիկներից, որոնք որոշ քանակով, տեսականորեն, բայց ցրված երեվան են զալիս ուրիշ հանքատեսակների հետ միասին՝ դառնալով ուրույն բազալիտի լուրջ հանուր նստվածքի մեջ»¹։ Այս համեմատությունը քնորոշ է և Ալիշան քննադատին։ Իր ուսումնասիրությունների աճած տեղագրական և քննադատական բնույթի հաստատման համար տալով սկզբնաղբյուրները Եշելիս, դրանց հեղինակներին տրված կարճատև քննադատմանը իսկ գտնում ենք գնահատության Եշված ուսումնասիրությունը, որանք արժեքավոր են քննադատական մտքի տեսանկյունից։

Ալիշանը մի առանձնակի հիշատակում է տանել հատկապես Ներսես Ծնորհալու նկատմամբ, որը բացատրվում է առաջին հերթին մեր միջնադարյան գրականության ավանդույթով։ Դեռևս կենդանության օրոք Ծնորհալին արժանացել էր մեծ հռչակի, մասին հետո դասվելով սրբերի կարգը։ Ստեղծվել էին գրական բարձր արժանիքներ ունեցող նրա վարքը և Լաճրոնացու «Ներքողյանը», Կիրակոս Գանձակեցու վկայությունները։ «Այս Ներսեսը իմաստությանը ավելի էր լցված, քան այն ժամանակ շատերը ոչ միայն հայ վարդապետների մեջ, այլև հույների ու ասորիների»²։ «Հայ հնատիպ գրքի մատենագիտությունից» երևում է նաև, որ Ծնորհալին է եղել մեր տպագրության առաջին երեք դարերի թուրից շատ հրատարակված հեղինակը։

Ծնորհալու ստեղծագործությունը և ընդհանրապես տասներկուերորդ դարի մեր գրականությունը պատմաբանասիրական խոր հետազոտության ու արժեքման է ենթարկվել Մխիթարյան միաբանությունում։ Ինչպես գրում է Միքայել Չամչյանը, երիցս երջանիկ Ներսեսը «ծաղկեցաւ ի սմին դարու յեկեղեցիս Հայաստանեայց՝ իբրև դրախտ աստուածատուն՝ զարդարեալ ամենայն վայելութեամբ քարեից արգասեաց»³։

1888 թ. Մխիթարյանները խորհրդանշական 88 լեզուներով հրատարակեցին Ծնորհալու «Հաւատով խոստովանիմը»։ Նրա հետ էր կապվում և հայ գրականության նոր վերելքը։ Միաբանության երկու հարյուրամյա գործունեությանը նվիրված ուսումնասիրությունում հարսեղ Սարգիսյանը գրում է, թե Ծնորհալին եղավ «Գլխավոր զարգացուցիչ երկրորդ շրջանի գրականության—ծոված ի քնն ոչ միայն քաղաքի մի գիտությանը, այլև քանաստեղծական մուրք հանձնարով և ճաշակով»⁴։

Ծնորհալին Ալիշանի համար հոգեհարազատ է եղել և՛ քննադատության հեզությանը, որն այնպես ընդգծում է նրա վարքագիրը, և՛ ստեղծագործության մեղմությանը ու լուսապարար բնույթով, ինչպես Չամչյանն է գրում՝ «Հեզահամբոյր և անդորրամիտ ոգով»։

Նաև հիշեմք, որ արտաքուստ ս. Ղազար կղզում փակված և վանական խաղաղ կյանքով ապրող Մխիթարյանները միշտ էլ մտահոգված հայության ճակատագրով, իրենց հաբազիտական հետազոտություններով արձագանքել են ժամանակի ցավոտ հարցերից շատերին։ Ավետիս Ահարոնյանի քննորոշմամբ Մխիթարյանների կյանքը «անձնագրողության, և այն խաղաղ, առանց ցնցումների, առանց փառքի, առանց վայելքի անձնագրողության մի անվերջ շարք է»⁵։ Նրանք և հատկապես խաղաղ այդ անձնագրողությանը ապրող Ալիշանին

¹ Հր. Թափափափյան, Հայ քննադատություն, հ. 1, Եր., 1983 թ., էջ 4։

² Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 82։

³ Միքայել Չամչյան, Հայոց պատմություն, Եր., 1985, հ. 1, էջ 81։

⁴ Բարսեղ Սարգիսյան, Երկու հարյուրամյա Մխիթարյան գրական գործունեություն, Վեներիկ, ս. Ղազար, 1918 թ., էջ 6։

⁵ Ավ. Ահարոնյան, Մխիթարյան միաբանություն, Թիֆլիս, 1901, էջ 14։

գրավել է Օճորհալու համահայկական գործունեությունը, ձգտումը ի մի գումարելու սփռված հայությանը և հասնելու Մայր Հայաստանի ու Կիլիկիայի հոգևոր-մշակութային առաջնի միասնության և ներդաշնակության: Ալիշանի բնորոշմամբ մեծ ջանքեր էին պահանջվում «Ազգի մը և այնպիսի ցրվյալ և տատանյալ ազգի մը հոգևոր հայրապետ ըլլալու»⁶: Այս իրողությունը արտացոլվել է դեռևս տասներկուերորդ դարում ստեղծված նրա վարքում. «Եւ իշխանութիւն մեր բարձեալ, և եկեղեցի մեր խրթնացեալ, և աշխարհն մեր յազգաց օտարաց աւերեալ, և յետին դառնագոյն և շար ժամանակի պատահեալք ցրտացեալ լինէիմ ամենեքեան առ սէր աստուծայնոցն»⁷:

Ալիշանից մեկ դար առաջ Չամչյանը ևս, ընդգծելով Օճորհալու ազգահավաքմանը նպատակամիտված ջանքերը, գրում է. «Եւ զի յայնմ ժամանակի ազգ մեր ըստ այժմուս վիճակի ցրուեալ էին ի գանազան կողմանս աշխարհի»⁸: Եակատարի բերումով Ալիշանից հետո կես դար անց վերստին այս իրողությունն էր շեշտելու Հակոբ Օշականը. «Որ այս ժողովուրդը ունի իր գաղթականները, կաթողիկոսին կողմն ներսեան է, որ պիտի երթա, պիտի սփոփե» տարբեր ցեղերից ամեն օր հայաժակն իր դժբախտ ժողովուրդը»⁹:

Օճորհալու հանդեպ Ալիշանի ունեցած վերաբերմունքը առավել է պարզվում և հղատակվում, երբ այն քննում ենք ընդհանրապես հայ միջնադարյան գրականության նրա ըմբռնումների և գնահատության ողջ համակարգում: Անգամ աղբյուրագիտական բնույթի հղումներում տրված սեղմ բնորոշումներում բացահայտվում են Ալիշանի գեղագիտական ըմբռնումները և արժեքավոր են քննադատական մտքի տեսանկյունից:

Օճորհալու հետ են կապվում Ալիշանի անցկացրած գրական-պատմական շատ գուգահեռներ: Օրինակ, «Հուշիկներում» Սահակ Պարթևի մասին ատում է, թե միայն Օճորհալին ունի նրա լեզվի մաքրությունը, իսկ «Ազգային վիպասանությունում» ձշում է, որ ուսկական լեզվով և ոճով առաջինը Օճորհալին է գրել:

Հայ միջնադարյան գրականության թե թեմատիկ և թե լեզվա-ոճական զգալի ազդեցություն ենք գտնում նաև Ալիշանի բանաստեղծական ժառանգությունում: Օճորհալու ազդեցությունը առավել նկատելի է հոգևոր և հատկապես Տիրամորմ ու Հիսուսին նվիրված բանաստեղծություններում:

Հրանտ Թամրազյանը գրում է, թե Լամբրոնացու՝ Օճորհալուն նվիրված «Ներքողյանի» արժանիքը պետք է փնտրել ուրիշ տեղ. «Դիմանկարի մեջ նշանավոր մտածողը կարևոր տեղ է տվել նաև հայոց հայրապետի՝ իր հանգուցյալ ուսուցչի գրական գործունեությանն ու երկերի գնահատությանը»¹⁰: Նույն ձևով Ալիշանի գեղարվեստական մեծ արժեք չունեցող բանաստեղծություններից շատերը արժեքավոր են քննադատական մտքի տեսանկյունից: Հատկանշական է հատկապես «Ոգին Հայաստանյաց» բանաստեղծությունը, որում սեղմ բնութագրումներով Ալիշանը ստեղծել է հայ մշակույթի գործիչների դիմանկարների մի յուրօրինակ պատկերաշար.

**Միբարկուջն Օճորհալի քաղցրաբան,
Եւ քաղաքոյն հրաշագարդ լեզու Լամբրոնյան,
Եզծիչ դեմից մշտամարտառ Կողբացին»¹¹:**

Ինչպես Օճորհալու հանդեպ Ալիշանի ունեցած վերաբերմունքի քննությունը չի կարելի սահմանափակել միայն «Օճորհալի և պարագա լուր» աշխատությանը, այնպես էլ վերջինս իր հերթին դուրս է գալիս Օճորհալու կյանքի և գործունեության շրջանակից, ընդգրկելով 10—12-րդ դարերի ու դրանց նախորդող շրջանի հայոց պատմության, գրականության, մշակույթի բազմաթիվ հարցեր:

Մինչև այս գործը Ալիշանը «Սոփերք հայկականքի» տասնչորսերորդ հատորում արդեն հրատարակել էր Օճորհալու վարքը, առաջաբանում գրելով՝ «Հոբակարայն ի հայրապետու մեր հետ Որպից և թուանց լուսավորչին և հաղորդ հոգվից նոյնի և արքան»¹²: Լուսավորչի և Պանդուխտների տոմսից սեղմված հայրապետների այս գուգահեռով է կառուցված նաև «Պարագա լուրը»: Մի կողմ թողնելով ծավալուն պատմաբանասիրական հատվածները, մնում է Օճորհալու կենսագրությունը, որին գուգահեռ ընթանում է և որից կարծես բխում է

⁶ Ղևնդ Ալիշան, Օճորհալի և պարագա լուր, Վենետիկ, Ս. Լուգար, էջ 360:

⁷ Սոփերք հայկականք, ԺՊ, Վենետիկ, 1854 թ., էջ 40:

⁸ Միջուղի Չամչյան, Աշխ. աշխ., էջ 81:

⁹ Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 369:

¹⁰ Հր. Թամրազյան, Աշխ. աշխ., հ. 2, Եր., 1965, էջ 332:

¹¹ Ղևնդ Ալիշան, Նորագ. Հայրենի, հ. 8, Վենետիկ, 1856, էջ 166:

¹² Սոփերք հայկականք, № 23, Վենետիկ, 1854, Ազր:

ճրատեղծագործության վերլուծությունը, ունենալով Ալիշանին այնքան բնորոշ հուզական-գնահատողական բնույթ:

Հերոսի կյանքն ու գործունեությունը ներկայացնող միջնադարյան վարքն ուներ իր որոշակի կառուցվածքը և օրենքները (կանոնը), որն արտացոլվել է Ալիշանի այս ուսումնասիրությունում: Գրական ավանդույթին հավատարիմ մնալու և ստեղծագործաբար այն զարգացնելու ձգտումը պարզորոշ երևում է Ալիշանի գործի ու Օճորհալու վարքի համեմատական քննությունը կատարելիս, խուսափելով, իհարկե, ամեն ինչ մեխանիկական ընդհանրության հանգեցնելուց: Համաձայն «Պիտոյից գրքի» վարքը սկսվում է գրության պատճառին նվիրված հատուկ առաջաբանով. «Եւ ի գովելն պարտ և արծան է նախաշաւիղ առնել ըստ տեղոյ պատճառին»¹³: Օճորհալու վարքի, որն ըստ Քնարիկ Տեր-Դավթյանի «զըրված է հնագույն վարքերի լավագույն ավանդույթների ոգով»¹⁴, առաջաբանում վարքագիրը իրեն համարելով «այր տառապետալ» և «անարծան մաքրութեան սուրբ հօրն», ցանկանում է նրանից առնել «զճորհս բանի և իմաստութիւն ուղղակի և անսայթաք շարագրել գտառչիկայ պատմութիւն սուրբ և հոմահրեշտակ վարուց նորին արծանապետ»¹⁵: Ալիշանը ևս զըրության պատճառին նվիրված առաջաբանում ասում է. «Այսպիսի հիշատակք ոչ միայն մեր նախնայց արժէքը հոչակել, այլ և անկե խրախուսելով՝ նոր ույծ կամ մղում մը առնուլ՝ մեր ներկային լավության և ապագային ավելի լավության»¹⁶:

Ինչպես վարքերը դրվատելով հերոսի առաքինությունը, բարեպաշտությունը և մեծ խմացությունը, արտահայտելով համընդհանուր գաղափարներ, միշտ կապված էին հայ կյանքին՝ արձագանքելով ժամանակի խնդիրներին, այնպես էլ Ալիշանի «Օճորհալի և պարագա յուրը» գրված լինելով գեղարվեստական մեծ շնչով ու պատմա-բանասիրական հանգամանակից քննությամբ, արձագանքում է տասնիններորդ դարի երկրորդ կեսին մեր ժողովրդին հուզող շատ հարցերի:

Ըստ «Պիտոյից գրքի» այնուհետև անհրաժեշտ է անդրադառնալ հերոսի տոհմաբանությանը, գովելով նրա ծագումը: Վարքի հեղինակը հավատարիմ է մնացել այս պայմանին ևս. «Ոչ է ի ճախ շինութիւն առանց հիման, և ոչ պատմութիւն առանց նախնեացն ցուցման»¹⁷: Սկսում է «Յոյժ իմաստուն և հանճարեղ» Գրիգոր Մագիստրոսով, այնուհետև հանգամանալիորեն ներկայացնում Գրիգոր Վկայասերի կյանքն ու գործունեությունը, և այս հատվածը կարելի է համարել նույնիսկ առանձին փոքրիկ վարք: Ալիշանը ևս այսպես է սկսում, գրելով՝ «Պահլավունյաց նախախնամայլ ցեղն հետ իբր 200 տարի ծածկվելու իբրև կայծակ մը մոխրուց ներքև, ժ՛ դարուն մեջ հագրատունյաց հարստության ատեն վերահայտնեցավ» (28):

Եթե վարքում շարունակ շեշտվում է Վկայասերի, այնուհետև Օճորհալու երկնատուր շնորհները, ապա հայագետ Ալիշանը բնականաբար ընդգծում է նրանց գրական-բանասիրական գործունեությունը: Վկայասերին տրված սեղմ և տարողունակ քնորոշման մեջ Ալիշանը կատարում է հայ գրականության պատմության յուրօրինակ պարբերացում. «Հետ Մեծին Սահակա և Մետովբա եղավ Երկրորդ թարգմանիչ և գլուխ երկրորդ թարգմանչաց և դպրության հայոց... Մեր դպրության Արծաթի դարուն Պարագլուխ»: Վկայասերի գործունեությունը Ալիշանը ներկայացնում է միահյուսված Կիլիկյան իշխանության և հայոց գրականության պատմությանը: Հաղորդվելիք պատմական փաստերն անգամ ներկայացնում է պատկերավոր ոճով: Հայկական իշխանության Կիլիկիայում պահպանվելու մասին գրում է, թե միայն «Տորոսի ժայռերուն մեջ՝ իբր արծվաթույն մը կախված՝ կրցավ դիմանալ» (38): Իսկ Ներսեսի և եղբոր մասին էլ ասում է, թե վկայասերը նրանց հարսեղ Անեցուն հանճանեց իբրև «Զուխտակ ակունք կամ լուսածին մարգարիտք» (43):

Համաձայն «Պիտոյից գրքի» այնուհետև պետք է ներկայացվի հերոսի մանկությունը և ստացած կրթությունը: Վարքում ասվում է, թե Օճորհալին կրթության ընթացքում «ցուցաճեղ զվարս սուրբ և զիմաստութիւն զիտութեանն»¹⁸: Ալիշանը ևս ընդգծում է, թե մարմնական սնունդից առավել հոգ էր տարվում երկու եղբայրների հոգևոր սնունդի համար: Հատկանշական է հատկապես հաջորդ նախադասությունը. «Մարմնավոր ծնողաց զգվանքն ավելի՝ ընդունելով հոգևոր դաստիարակաց խնամքը» (47):

¹³ Մովսես Խորենացի, Մատենագրությունը, Վեներտիկ, 1865, էջ 413:

¹⁴ Քնարիկ Տեր-Դավթյան, 11—15-րդ դարերի Հայ վարքագրությունը, Եր., 1980, էջ 119:

¹⁵ Մովսեք..., էջ 10:

¹⁶ Ղևոնդ Ալիշան, Օճորհալի և պարագա յուր, էջ Ժ, այսուհետև սույն աշխատությունների մեջքերումների էջերը կնշվեն շարադրանքում:

¹⁷ Մովսեք..., էջ 12:

¹⁸ Մովսեք..., էջ 88:

Անկեղծ ապրումներով նկարագրված երկու եղբայրների մանկությունում նկատելի է և ինքնակենսագրական կողմը: Ալիշանը ևս եղբոր հետ բերվեց ս. Ղազար, կարճ ժամանակ անց կորցրեց ծնողներին և վանքի պարիսպների ներքո անցավ նրանց պատանեկությունը, այնուհետև՝ Ալիշանի հետագա ողջ կյանքը: Ի դեպ, Շնորհալույն նկիրված շատ մտքեր ու հաստատվածներ բնորոշ են հենց Ալիշանին և թխում են նրա էությունից, ինչպես բնավորության հեզության և գիտական մեծ իմացության համատեղումն ընդգծող հետևյալ տողերը. «Իր բնական հեզությունն ու ձեռնարկությունն ալ զինքը ամենուն կը մոտեցներ, ձիրք մը՝ որ թերևս գիտութենեն ավելի մեծ է և անշուշտ ավելի սիրելի»: Համանման օրինակները վերկայում են, որ Շնորհալին ոչ միայն գրավել է Ալիշան հետազոտողին, այլև հոգեհարազատ է եղել նրան:

Վարքի հիմնական մասը նկիրվում է հերոսի գործունեությանը. «Եւ ապա զմեծ գլուխ ներբողինին ղնել զգործան»¹⁹: Շնորհալու կյանքի և գործունեության մասին վարքում ասվում է. «Մաքրեալ և յարդարեալ էր զհոգի և զմարմին և զմիտս՝ տաճար և բնակարան համագոյ երրորդութեանն»²⁰: Ալիշանը ևս ընդգծում է այս ներդաշնակությունը, հոգեւիրությունից և բարոյական առաքինությունից առավել շեշտելով Շնորհալու շարունակ մտավոր աշխատանքով և ստեղծագործելով զբաղված լինելը:

Շնորհալու գրական ժառանգության գնահատությունում և քննադատական դիտողություններում գործածում է միևնույն պատկերավոր ոճը: «Յիտուս Որդիի» համար ասում է, թե այն առաջին գործն է «նոր թևերը պարզող քերդողին» (75):

Ալիշանը Շնորհալուն համեմատելով տարբեր հեղինակների հետ՝ կատարում է հայ գրականության պարբերացումը, նշելով տարբեր շրջանների միջև եղած առանձնահատկությունները: Այսպես, գրելով, թե բանաստեղծական հանկարծահաս թիչքներով Շնորհալուն չի կարելի համեմատել Նարեկացու կամ խոր վսեմությամբ՝ Ստեփանոս Այունեցու և Մուկացու հետ, այնուհետև ավելացնում է, թե այդ վսեմությունը «հին դարերու սեփական կղմիք է և գրեթե անհնար է նորագույն դարերից պահանջել» (82):

Շնորհալու վարքագիրը Եղեղնայի առման մասին ասում է, թե գրեց «յոժ գեղեցիկ և յարմարական պատմութեամբ, որ զամենայն ընթերցողս շարժե»²¹: Ահա ընթերցողին «շարժելը», հուզելը նկատի ունի և Ալիշանը, ասելով «Մենք հետագայքս ոչ առանց խոր զգացման կրճանք լուել և կարդալ Անվո մասը» (208):

Ալիշանը Շնորհալու գրական կարևոր արժանիքներից է համարում նրա հատակաբան և պարզ լեզուն ու ոճը, ինչպիսին է և «Ողբի» նման դիմառնական եղանակով գրված «հաղազս երկնից և զարդուց նորին» 200 տողանոց գործը. «շատ բանաստեղծական թռչանց, շատ վայելուչ, կոկ և շնորհալի գրուած մը» (254): Իսկ տարբեր շարականներ բնորոշելով մի քանի քառով (օր. «կարճ տողուք և երկար իմաստուք չքնաղ երգերն՝ «Առաւօտ լուսոյ և Աշխարհ ամենայն»), ասում է, թե կրկնողների սրտի հետ է խոսում հեղինակի «մաքուր, փափուկ և աստվածարայի սիրուն» (447):

Համանման «Պիտոյից գրքի» այնուհետև հերոսը համեմատվում է մի նշանավոր անձի հետ և ցույց է տրվում առաջինի գերադասությունը: Այսպես է վարվում և Կորյունը. «Վարք Մաշտոցիում» Մաշտոցին համեմատելով Մովսես մարգարեի հետ, առավել երջանիկ համարելով Մաշտոցին²²: Ալիշանը ևս գրում է «ԶԲեռնարդոս այն դարուն մեջ արևմտյան եկեղեցվույն հոգի տեսնել, զՇնորհալի՝ արևելյան եկեղեցվո հրաշալի շունչ» (175): Նրանց համեմատելով՝ ասում է «Անհկա (Բեռնարդոսը—Վ. Դ.) հրեղեն լեզու մ՝ էր ճարտասան, սահկա մեղմակաթ շրթունք երգահան» (280): Բերելով համանման բազմաթիվ օրինակներ՝ ընդգծում է Շնորհալու և նրա գործի առավել հարատևությունը:

Ալիշանը պատմա-բանասիրական այս ուսումնասիրությունում բուն շարադրանքին իր հուզական և անմիջական տարբեր միջամտություններով կարծես շարունակում է մեր պատմագրության ավանդները, Պատմահոր նման դրսևորում իր վերաբերմունքը՝ արտահայտելով ուրախություն կամ տխրություն: Այսպես, ցավ հայտնելով, որ մեզ չեն հասել Շնորհալու տարբեր գործերի հեղինակային իսկագիր օրինակները, գրում է. «Մենք չենք արժանավորած այն շնորհակիր և աստվածամաներկ մատանց նյութական շարագրությունը տեսնելու և համբուրելու» (85): Կամ որևէ հարցի մասին խոսելիս, երբ ոգևորվում է Պատմահոր նշման, ասում է, թե անհրաժեշտ է խոսքը համառոտել և առաջ անցնել:

Իր պատկերավոր համեմատությունները կառուցում է՝ զուգահեռ անցկացնելով մեր հին մատենագրության հետ: Բերելով Խորենացու խոսքերը «Հայկ, Արամ, Տիգրան, քանզի՝

¹⁹ Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 418:

²⁰ Սոփերք..., էջ 85:

²¹ Սոփերք..., էջ 41:

²² Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1981, էջ 101:

Քաջաց ազգ քաջքն», այնուհետև հիշելով Գրիգոր Լուսավորչին, Սահակ Պարթևին և Ներսես Շնորհալուն ասում է, թե մենք ևս «Կրնանք ըստ սրբության, իմաստության և գիտության» կոչել Լուսավորիչ, Թարգմանիչ և Շնորհալի» (էջ 3):

Կիլիկյան գրականությանը և մշակույթին Ալիշանը վերստին անդրադառնում է «Սիտումում»: Դարձյալ շեշտում է Շնորհալու սրբակենցաղ վարքը: Բերելով հոգևորականներից ուղղված նրա խոսքերը, թե պետք չէ ձիով ընթանալով շատ հրապուրվել, այնուհետև ավելացնում է. «Այլև ինքն հեզահամբույրն այն հայրապետ, որ թվեր աղավճո թևք միայն օղապարել»²³:

Ալիշանի ավելի քան կեսդարյա պատմա-բանասիրական աշխատանքի ծնունդն էր հայոց պատմագրության և պատմության ամփոփ ընթացքը ներկայացնող «Հայապատումը»: Այս գրքում ևս ընդգծելով Շնորհալու ու Լամբրոնացու հոգեհարազատությունը և գործի ընդհանրությունը, մի խորագրի ներքո է ներկայացնում նրանց կյանքն ու գործունեությունը: «Հայապատումի» երկրորդ մասում քննադատական մտքի տեսանկյունից արժեքավոր են մեր հին գրականությունից բերված գործերի կամ դրանց հատվածների ծանոթագրությունները: Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը շարունակող Հովհաննես Երզնկեցու գործի հիշատակարանի հետևյալ «Փայլեալ, կորովամիտ և համեղաբան կաթողիկոսն հայոց Տէր Ներսես Կլայեցի» խոսքերի մասին Ալիշանը ծանոթությունում ասում է. «Արդարակշիռ գովեստ, գերակշիռ Շնորհավուն»²⁴:

Շնորհալու գրական գործունեությունը համընկավ մեր ժողովրդի համար ծանր ու անհաստատ մի ժամանակաշրջանի հետ, որն, ինչպես ասացինք, շեշտել են թե ժամանակակիցերը և թե հետագա շրջանի հեղինակները: Եվ պատահական չէ, որ անցյալ դարավերջին արևմտահայությանը բաժին ընկած սարսփներից հետո, երբ Մխիթարյանները որոշում են հրատարակել «Բազմավեպի» պատկերազարդ «Որբունին» և հասույթը տրամադրել հայ որբերին, Ալիշանը գրում է «Երեքյակ Ներսիսյանք» հոդվածը նվիրված Ներսես Մեծին, Շնորհալուն և Լամբրոնացուն, որովհետև նրանք մյուս բազում արժանիքների հետ միասին հայտնի էին «Խնամուք ի վերա կարոտելոց»²⁵:

Վերստին նշելով, թե Շնորհալին էր «Մտաց պայծառությամբ և հարստությամբ հանճարո» և այլ արժանիքներով, սակայն բարեգործական այս հանդեսում իր նպատակն է համարել ցույց տալ «Ներսեսի գթասիրությունն և անով ըրածն իր ազգայնոց»²⁶:

Այս հոդվածում ևս Ալիշանը ժամանակի հուզող խնդիրների հետ է կապում և դրանցով իմաստավորում ստեղծված գրական արժեքները: Գթությանը նվիրված այս հոդվածում Ալիշանի մեջբերմամբ նոր խորհուրդ է ստանում Տիրոջն ուղղված Շնորհալու խոսքը «Արդարութեամբ մի դատեսցես, այլ գթութեամբ քո քավեսցես»:

Այնուհետև դիմելով վերջին մեծ «Ներսիսյանին»՝ Լամբրոնացուն, մաղթում է ներշնչվելու համար արտասովոր իսկալույս աչքերից մի կաթիլ մարգարտափայլ արտասուք «համազգի վտանգելույս վրա, անհայտ, անմայր Որբոց և անորդի որբացելոց»²⁷:

В. Г. ДЕВРИКЯН—Шнорали в оценке Алишана.—В статье показывается, как Г'евонд Алишан, творчески развивая сложившиеся в нашей средневековой литературе и Мхитарянской школе традиции, подвергает литературно-критической оценке литературную и духовно-гражданскую деятельность Нерсеса Шнорали. Одновременно утверждается, что Алишан, рисуя литературный портрет Шнорали, остался верным тем принципам и тенденциям житийного образа, которые были присущи нашей древней литературе.

²³ Ղևոնդ Ալիշան, Սիտում, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 487:

²⁴ Ղևոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, Ս. Ղազար, 1901 թ., էջ 512:

²⁵ Ղևոնդ Ալիշան, Երկ. հր., Եր., 1981, էջ 854:

²⁶ Նույն տեղում, էջ 857:

²⁷ Նույն տեղում, էջ 866: